ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 29

## ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

1. Եկամատային մաս

Հողի հարկը պակասեցնել 245.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 3155.0 հազ. դրամ:

Գույքահարկ փոխադրամիջոցներից ֆիզ. անձանց պլանը ավելացնել 245.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 4345.0 հազ. դրամ:

Տեղական տուրք /բացօթյա վաճառք/ պլանը պակասեցնել 100.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 500.0 հազ. դրամ:

Տեղական վճար պլանը ավելացնել 100.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 3100.0 հազ. դրամ:

**Արմաշ համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել**

,, Սոց. անապահով անձանց,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 10, խումբ 7, դաս 1, ծրագիր 54/ տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածին ավելացնել 130.0 հազ. դրամ, ճշտված պլանը սահմանել 3180.0 հազ. դրամ:

,, Ընդհանուր բնույթի տնտես. և առևտրային հարաբերություններ /բաժին 4, խումբ 1, դաս 1, ծրագիր 51/ ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5133 հոդվածի ծախսը պակասեցնել 450.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 1550.0 հազ. դրամ:

,,Կառավարման մարմնի պահպանում,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51/ տնտեսագիտական դասակարգման 5122 հոդվածի ծախսը ավելացնել 450.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 1150.0 հազ. դրամ:

Վ/ք պահուստային ֆոնդը սահմանել 717.4 հազ. դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ՍԱՐԳԻՍ կողմ
2. ՁԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ կողմ
3. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ կողմ
4. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ կողմ
5. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ կողմ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՁԵՅՆԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 30

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ /ԿՈՅՈՒՂՈՒ/ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով.

Սահմանել հետևյալ տեղական վճարը՝

Արմաշ համայնքի կոյուղագծին անհատական միանալու թույլտվություն 5000 /հինգ հազար/ դրամ, իրավաբանական անձանց՝ 20000 /քսան հազար/ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԶԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ
3. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
4. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
5. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԶԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

ՈՐՈՇՈՒՄ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 31

2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

Հաստատել 2016թ.-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի շինությունների /ներառյալ ոչ հիմնական շինարարության/ տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային տների/, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

2/ սույն կետի ,,ա,, ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10.000 /տաս հազար/ դրամ:

բ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:

գ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:

դ/ 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 /երեսուն հազար/ դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության

թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կցակառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն մինչև 3000 /երեք հազար/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

1-ին. 2-րդ, 3-րդ կետերի համար կիրառված է 0,3 գործակիցը:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է`

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար/ դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում`

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար` 20 /քսան/ դրամ մեկ քառակուսի մետրի համար:

2/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

3/ Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 20.000 /քսան հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները/սաունաները/, զվարճանքի օբյեկտները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար` ընթացիք տարվա համար սահմանվում է`

1/ առևտրի օբյեկտների համար 25.000 /քսանհինգ հազար/ դրամ:

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50.000/հիսուն հազար/ դրամ:

3/ բաղնիքների/սաունաների/ համար 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ:

4/ խաղատների կազմակերպման համար 500.000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

5/ շահումներով խաղերի կազմակերպման համար 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ:

6/ վիճակախաղերի կազմակերպման համար 100.000/մեկ հարյուր հազար / դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է`

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք զովացող արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

2/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք զովացող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

3/ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

4/ համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար սահմանել 700 /յոթ հարյուր/ դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 1000 /մեկ հազար / դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ ընթացիք տարում 3000 /երեք հազար/ դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10.000 /տաս հազար/ դրամ:

2/ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողեր հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 3000 /երեք հազար/ դրամ:

3/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3000 /երեք հազար/ դրամ:

4/ Արմաշ համայնքում սահմանել աղբահանության վճար մեկ շնչի հաշվով ամսեկան 100/մեկ հարյուր/ դրամ:

5/ Արմաշ համայնքում սահմանել կոյուղու վճար մեկ շնչի հաշվով տարեկան 2400/երկու հազար չորս հարյուր/ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ՁԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ
3. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
4. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
5. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՁԵՅՆԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 32

### 0.28439 ՀԱ ՋՐԱՅԻՆ ՀՈՂԻ 7.60310 ՀԱ ԵՎ 3.14671 ՀԱ ԳՅՈՒՂ.ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ՝ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ և 60-րդ հոդվածների պահանջներով.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 0400 ծածկագրից 0.28439 հա ջրային հողը 4000 դրամ մեկնարկային գնով, 0413-0001 ծածկագրից 3.14671 հա 35000 դրամ մեկնարկային գնով և 0413-0001 ծածկագրից 7.60310 հա 84000 դրամ մեկնարկային գնով գյուղ.արտադրական հողերը կառուցապատման տրամադրել մրցութային կարգով:

2. Կառուցապատման տրամադրելու նվազագույն քայլի չափը սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ
3. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
4. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
5. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 33

## ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողի հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի ժ/ կետով

Թույլատրել համայնքի ղեկավարին սահմանել հողի հարկի արտոնություն համայնքի հետևյալ բնակիչներին՝ Աղիլխանյան Հրանուշին- 15000 դրամ, Ալավերդյան Կարապետին-15000 դրամ, Ավետիսյան Վահագնին-20000 դրամ, Բալյան Հրայրին- 20000 դրամ, Հովհաննիսյան Հովիկին- 20000 դրամ, Ղազարյան Խորենին- 10000 դրամ, Մարգարյան Հարությունին- 30000 դրամ, Մկրտումյան Մինասին-15000 դրամ, Մուսախանյան Լուսյային-15000 դրամ, Շահնազարյան Արարատին-20000 դրամ, Շահվերդյան Նվերին- 20000 դրամ, Պետրոսյան Մյասնիկին-15000 դրամ, Սինանյան Մինասին- 30000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ
3. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
4. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
5. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ